ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1606

03.02.2016թվ.

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՈՒԲ
ՍՏՐՈ № 630
04 02 2016 թ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

<< Ոստիկանության ... մուտք
Մուտք թիվ 678
04 02 16թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հունվարի 30-ին, Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ, արձանագրել է երկու գլոբալ հիմնախնդիր՝ կապված ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքների հետ:

Վերջին երեք այցելությունների ընթացքում Դիտորդական խմբի անդամները, մեկուսի հանդիպելով ՁՊՎ-ում պահվող անձանց հետ, պարզել է, որ նշված անձիք ամբողջությամբ չեն տիրապետում իրենց իրավունքներին, որ վարչակազմի կողմից չի իրազեկվում իրավունքների մասին, և վարչակազմը դա օգտագործում է ի շահ իր ծառայության:

1. Ինչպես նախորդ այցելություններին, այնպես էլ տվյալ այցելության ընթացքում, ձերբակալվածները հայտնեցին Դիտորդական խմբին, որ ցանկացել են լոգանք ընդունել, բայց վարչակազմի կողմից հնչել է մեկնաբանություն, որ իրավունք չունեն: Ավելացնենք, որ որևէ անձի անուն չնշելը պայմանավորված է անձին չվնասելու սկզբունքով:
2. Հաջորդիվ ներկայացվող հիմնախնդիրը վերջին մի քանի այցելության ընթացքում Դիտորդական խումբը բազմիցս է արձանագրել, սակայն այցելության պահին ՁՊՎ-ում պահվող Ս.Ա.Կ-ն հայտնեց, որ <<29.01.2016թ-ին հերթապահ ոստիկանը իրեն է ներկայացրել մոր՝ տիկին Ա.Գ.-ի անձնագիրը՝ ճանաչման, հանձնուք ընդունելու նպատակով: Ես հաստատեցի, որ դա մայրս է, խնդիր չկա, և ցանկացա տեսակցել մորս հետ, բայց ինձ ոստիկանը պարզաբանեց, որ պետը տեղում չէ, հիմա հնարավոր չէ այն իրականացնել>>:

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60,
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

Հավելենք, որ նշված տեսակցության վերաբերյալ առաջարկություն կատարել էր նաև մայրը՝ տիկին Ա. Գ.-ն, ով նշեց, որ <<իրեն չեն մերժել, կրկին նշել են, որ պետը տեղում չէ և ներկայիս պահին հնարավոր չէ կազմակերպել>>:

Ներկայացված երկու դեպքն էլ, ըստ Դիտորդական խմբի, մտահոգիչ են և կրում են պարբերական բնույթ, որովհետև նմանատիպ փաստեր բազմիցս են արձանագրվել:

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և միջոցներ ձեռնարկել դրանց ուղղությամբ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 621 <<22>> 02 2016թ.

Ձեր 03.02.2016թ. թիվ 2621/1606 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հունվարի 30-ին ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Երևան քաղաքի վարչության կողմից կատարվել է ստուգում, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Ինչպես ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների, այնպես էլ Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում վարչակազմի կողմից ՁՊՎ ընդունվող ձերբակալվածներին ծանուցվում է իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, ինչը ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ով սահմանված ձև 19 տեղեկանքով հաստատում է ձերբակալվածը իր ստորագրությամբ: Բացի այդ, ինչպես արդեն տեղեկացվել է դիտորդների խմբին, ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներում ձերբակալվածների իրավունքների պաշտպանությունն ավելի արդյունավետ դարձնելու, վերջիններիս և նրանց հարազատների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ ծառայության վարչությունում մշակվել է իրավական ակտերից կազմված պաստառներ, որոնցում արտացոլված են ձերբակալման կարգը, ՁՊՎ ընդունելու հիմքերը, ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքները և պարտականությունները: Նշված պաստառները տրամադրվել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին, որոնք փակցվել են ինչպես տարածքային ստորաբաժանումների նախասրահներում, այնպես էլ ՁՊՎ-ների խցերում:

1. Ձերբակալվածների կողմից դիտորդների խմբին արված այն հայտարարությունը, որ իբր իրենք ցանկացել են լոգանք ընդունել, իսկ ՁՊՎ վարչակազմը մերժել է՝ մեկնաբանելով, որ այդ իրավունքը իրենք չունեն, չի համապատասխանում իրականությանը: Ոստիկանության Երևան

քաղաքի վարչության ՁՊՎ-ն ապահովված է մշտական տաք և սառը ջրով: Ձերբակալվածների կողմից լոգանք ընդունելու ցանկության դեպքում նրանց տրվում է այդ հնարավորությունը:

Դիտորդների խմբի այցելության օրը ՁՊՎ-ում գտնվել են երեք ձերբակալվածներ, որոնք լոգանք ընդունելու մասին ցանկություն չեն հայտնել:

2. Ձերբակալված Ս.Կ-ի մայրը՝ Ա.Գ-ն 29.01.2016թ. հանձնուք է բերել ՁՊՎ, որը սահմանված կարգով ընդունվել և տրվել է ձերբակալվածին: Այդ օրը տեսակցություն տրամադրելու վերաբերյալ Ա.Գ-ն ՁՊՎ-ի ղեկավարությանը չի դիմել, սակայն դիտորդների խմբին հայտնել է, որ իրեն տեսակցություն չի տրամադրվել ՁՊՎ-ի պետի բացակայության պատճառով: Հարկ է նշել, որ ՁՊՎ-ի պետի բացակայության ընթացքում նրան վերապահված պարտականությունները կատարում է նրա տեղակալներից որևէ մեկը և այդ հանգամանքը չի կարող ՁՊՎ-ի բնականոն գործունեության խաթարման պատճառ հանդիսանալ:

Միաժամանակ հայտնվում է, որ Ա.Գ-ն տեսակցության տրամադրման վերաբերյալ ՁՊՎ-ի ղեկավարությանը դիմել է միայն 30.01.2016թ. և նույն օրը, նրանից ընդունվել է գրավոր դիմում ու սահմանված կարգով տրամադրվել է տեսակցություն:

ՀՀ ոստիկանության շտաբ

Կատ. Մ.Գրիգորյան
հեռ. 59 68 50